

ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՀԱՅ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ

ԺԹ. ԴԱՐ

Ա.

ԱՇՈՒՂ ՖԶԱՐՍ. ԹՈՒՄԱՍ

Դալարադեազ գաւառի Փաշալու գիւղի հին բնակիչները մինչեւ օրս էլ առանձին հիացմունքով են վերջիչում եւ մեծ գո-վեստով արտայայտում իրենց սիրելի աշուղ Թումաս Փարմանեանի մասին, որ յայտնի է իր երգերի մէջ Ֆալարայ թումաս մականունով:

Աշուղի պատմութեան գլխաւոր էջերը եւ նրա աշխարհահայեացքի էութիւնը պար-զելու համար, դժբախտաբար, չունենք փաստական հարուստ տեղեկութիւններ: Գիտենք միայն որ նա ապրել է եւ ըս-տեղծագործել ԺԹ. դարի վերջին եւ ԺԹ. դարի առաջին շրջանում: Ծնւել է 1790 թւին, հայաբնակ Փաշալու գիւղում, ուր ստացել է իր նախնական կրթութիւնը, իսկ իր ժամանակի յայտնի աշուղներից Փարհադի մօտ սաղի վրայ նւագել է սո-վորել եւ ստացել է իր աշուղական կո-չումը:

Նա իր ամբողջ կեանքը նւիրել է աշու-ղական արւեստին, իսկ իր մտաւոր պատ-րաստութեամբ վայելել է ժողովրդի սէրն ու յարգանքը:

Իր աշուղական գործունէութեան շըր-ջանում նա թափառական կեանք է վա-րել. չընկել է Դարալագեազի ու Նախիջե-ւանի հայաբնակ ու թրքաբնակ գիւղերը: Եղել է նաեւ Երեւանում, Քանաքեռում, Էջմիածնում, Օշականում: Ամէն տեղ էլ նա հնչեցրել է աշուղական սաղն ու չօն-գուրը եւ իր վարպետ նւագածութեամբ,

իր դիւրեկան ձայնով առանձին փայլ ու շքեղութիւն է տւել գեղջկական խնջոյքնե-րին եւ տօներին: Նոյնպէս մրցել է իր ժա-մանակին հոչակ ստացած աշուղների հետ եւ նրանց «կապել» — յաղթել է: Այդ հան-գաթանքների շնորհիւ էլ նա մեծ ժողո-վրդականութիւն է վայելել: Նա կրթել եւ հայ ժողովրդին նւիրել է աշուղական ձիրքով օժտւած մի խումբ երգիչներ, ո-րոնք իր մօտ սովորել են սաղի ու չօնգու-րի վրայ նւագել եւ աշուղի կոչում ստա-ցել: Նրա լաւագոյն աշակերտների շար-քում պատւաւոր տեղ է գրաւում յայտնի աշուղ Նէշտարը:

Բանաստեղծական արւեստին հմուտ Ֆալարան հայ աշուղական գրականութեան աւանդ է թողել մի շարք պարզ եւ անպա-ճոյճ երգեր, որոնց մէջ նա արտայայտել է իր կրօնական գաղափարները, որոնք ընդգծում են, որ նա բարոյախօս-աշուղ է:

Նրա աշուղական ստեղծագործութիւն-ներից մի քանի էջեր ընդօրինակւած են 1870 թւականին Դարալագեազի Քարա-դուլի գիւղում գրած ձեռագիր «Դավ-թարում», որ աշուղական հին երգերի մի արժէքաւոր հաւաքածու է, որը 1930 թը-ւին, Թիֆլիսում, նւիրեց մեզ տաղանդա-ւոր աշուղ՝ Շերամը — Գրիգոր Տալեանը: Թէ ո՞վ է գրել այդ «Դավթարը», յայտնի չէ, որովհետեւ չունի յիշատակարան:

«Դավթարի» 80 եւ 81րդ էջերը զար-դարում են աշուղ Ֆալարայ թումասի եր-գերը: Դրանցից մէկը պարզում է աշուղի կեանքի մի ուրոյն էջը: Նա մի գեղեցիկ օր Երեւանից դնում է Էջմիածին եւ ժամա-

նակի՝ վեհափառ կաթողիկոսի մօտ եր-գում իր յօրինած մի կրօնական այլաբա-նական բանաստեղծութիւնը, որի միտքն ու բովանդակութիւնը, սակայն, հայոց հայրապետը չի կարողանում լուծել: Ո-տանաւորը իր էական վառուցումով ա-շուղական գրականութեան հետաքրքրա-կան էջերից մէկն է, որ ներկայացնում է հետեւեալ պատկերը.

«Քեզանից հարցնեմ, ճարտար իմաստուն,
Դրախտական բուսած ծառքն քանի՞ ա.
Մեր տէրն՝ որ ստեղծեց բոլոր բովանդակ,
Հաղար մէկ անւան փառքն քանի՞ ա:

Եղեմական դրախտան բուսած բաները,
Ո՞վ էլաւ Ադամայ իրան աները.
Երկնքէն թափեցուց սատանաները,
Հիմիկւայ մնացած դօրքն քանի՞ ա:

Գարրիէլ ողջոյն տւաւ Մարիամայ սրբոյն,
Բռնին, չարչարին միածին որդոյն,
Կաղմած կամար էլաւ երկնքին մէկ սիւն,
Հրաշափառ լուսու տարքն քանի՞ ա:

Ֆալարայ թումասն եմ ես մեղաւոր,
Մեղայ քեզ կոչեմ, հայր իմ երկնաւոր.
Օհանէս Մկրտիչ էլաւ կնքաւոր,
Յիսուս Նազովրեցու սրբութն քանի՞ ա »:

Յիշատակենք աշուղի իր սաղի լարերի վրայ հնչեցրած կրօնական մի այլ ոտա-նաւորը: Դա մի պարզ եւ անպաճոյճ «ղա-ֆիա» է, որ այլաբանօրէն պատկերում է Քրիստոսի կերպարը: Ահա բանաստեղծու-թեան զծագրութիւնը.

«Արարիչ ստեղծող բոլոր բովանդակ,
Ամենակալ կարող տէր Մանուէլն,
Սատանան ձեռագիր արեց Ադամայ,
Էլաւ ինքն ջնջեց մեր Մանուէլն:

Գարրիէլ ողջոյն տւեց քեզ, Մարիամ
[կո'յս,
Մանուէլ ծնանիր, թարգմանիր Յիսուս.

Բաղդասար համբուրեց սալիտակ մօրուս,
Քովիդ նստած տեսաւ ծեր Մանուէլն:

Մարիամայ սուրբ կուսէն որ ծնունդ առեց,
Հինգ հաղար չորս հարիւր ամին համարեց.
Ընտիր մարգարէից խօսքն կատարեց,
Սիմէոն ծերունակիր Մանուէլն:

Առաքուցիր երկնքիցն մեզ համար,
Աստուած էիր, որդի կոչուար Մարիամայ.
Սուրբ Յոհանէս ողջոյն տուեց Ադամայ,
Ասաց՝ շուտով կը դայ ձեր Մանուէլն:

Քրիստոսի խաչի ահեղ տէրութիւն,
Մեղաւոր թումասին տացէ թողութիւն.
Մէջ երեք օրեայ առեց յարութիւն,
Որ համբարձաւ դնաց վեր Մանուէլն:

1875 թւականին աշուղն ընդմիշտ փա-կել է իր պայծառ աչքերը: 82 երկար տա-րիներէից ի վեր նա գերեզման է իջել, բայց չի մոռացել: Նրա յիշատակն այսօր էլ վառ է Դալարադեազի շրջանի ծերունիներ-ի սրտերում: Ապրում է նա հայ աշուղա-կան գրականութեան աւանդ թողած իր երգերով, որոնց մէջ ցոլանում է նրա բա-նաստեղծական ձիրքը եւ աշխարհահայ-եացքի էութիւնը: Այդ երգերով նա մի համեստ էջ է գրաւում հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ:

Բ.

ԱՇՈՒՂ ՂՈՒԼ ԹԱԳԷՈՍ

Հայ աշուղական բանաստեղծութեան այն պայծառ դէմքերից մէկն է Ղուլ Թա-դէոսը, որի յօրինած ոտանաւորները հա-րստացրել են դուստնական երգարւեստի դանձարանը: Չնայած այդ հանգաման-քին, հայ դուստնական գրականութեան պատմութեան մէջ նրա անունը մինչեւ օրս էլ չի յիշատակւած, մնացել է նա անյայտ ու անծանօթ եւ համարեա մոռացւած է: Ապրել եւ ստեղծագործել է նա ԺԹ. դարի առաջին շրջանում: Դա այն պատ-

մաշըջանն էր, երբ հայ աշուղական ար-
ւեստի դիրքերում հետզհետէ քայլել են
նորանոր աշուղներ եւ իրենց ստեղծագոր-
ծութիւններով բարձր պահել հայ գրական-
նութեան մշակոյթի դրօշը:

Թէ ի՞նչ պատկեր են ներկայացնում ա-
շուղի կենսագրութեան եւ հասարակական
գործունէութեան հիմնական էջերը, գրթ-
բախտաբար, փաստական հարուստ տեղե-
կութիւններ չունենք: Այսքանը միայն
յայտնի է, որ նա իր դարաշրջանի այն
պայծառ դէմքերից մէկն է, որ իր ամ-
բողջ կեանքը նւիրել է հայ աշուղական
արւեստին եւ գեղջուկ ժողովրդին: Այդ
ժողովրդի համար էլ նա երգեր է յօրինել,
եղանակներ կերտել եւ երգել է ու նւա-
ղել: Երկար տարիներ թափառել է նա
Դարալագեաղի եւ Նախիջևանի հայաբը-
նակ ու թրքաբնակ գիւղերը, որտեղ իր
չօնգուրի ու սաղի նուրբ նւագածութեամբ
եւ իր քնարական ինքնուրոյն երգերով շու-
տով գրաւել է ժողովրդի սէրն ու համա-
կրանքը:

Աշուղ Իմրանի վկայութեամբ՝ Ղուլ
Թաղէոսը հայ աշուղական գրականու-
թեան աւանդ է թողել մի շարք երգեր,
որոնցով նա պատկերել է իր քնարական
յոյգերը, տրամադրութիւններն ու հոգե-
կան ապրումները: Երգել է նաեւ իր ժա-
մանակի հասարակական կեանքի ուշա-
դրաւ երեւոյթները:

Այդ երգերը հնչել են գեղջուկ ժողովրդի
չրթներէ եւ ժամանակի հայ աշուղների՝
Իմրանի, աշուղ Նէշտարի եւ այլ գուսան-
ների սաղերի վրայ: Հնչել նաեւ ժողովրդ-
դական տօներէ եւ ուրախութիւնների ժա-
մանակ եւ ամէն տեղ էլ տարածել է աշու-
ղի անունը: Դրանք գրեթէ են ժողովրդի
խօսակցական բարբառով եւ գրաւիչ են ի-
րենց ուրոյն քնարերգութեամբ, պատկե-
րաւորութեամբ եւ զգացմունքի ջերմու-
թեամբ:

Աշուղի «Դավթարը», գթբախտաբար,
մեզի չի հասել, բայց նրա մի քանի ոտա-
նաւորներն ընդօրինակած են 1870 թւա-

կանին Դարալագեաղի Քարաղլուխ գիւ-
ղում գրած ձեռագիր «Դավթարում»:
Դրանցից ուշագրաւ է «էս օր մի գիւղալ
տեսայ» խորագրով ոտանաւորը: Դա իր
բովանդակութեամբ մի սիրերգ է, որի
մէջ աշուղն արեւելեան գունեղ երանգա-
ւորումներով եւ վառ պատկերներով եր-
գել է իր «Նազանի գիւղալի» գեղեցիկ
յատկութիւնները եւ նրա հիւրասէր ոգին:
Ահա երգի պատկերը.

« Էս օր ես մի գիւղալ⁽¹⁾ տեսայ,
Խիստ նազանի ջան է սիրուն.
Ջա'ն ասելով, ջա'ն լսելով՝
Կոնէս բռնեց տարաւ սիրուն:

Տարաւ, աշուղիս տեց հաց,
Հէնց ծիծաղեց, փեղքս զնաց.
Լոյս երեսին կամար կապած,
Խալերն մարջան⁽²⁾ է սիրուն:

Խալեր ունի եաղութ⁽³⁾ եաման,
Սիրեցի նրան բէգուման⁽⁴⁾.
Շովղայ⁽⁵⁾ կու տայ արեգական
Երեսն աննման է սիրուն:

Երեսն աննման է լուսով,
Սիրեցի նրան հաւաստի⁽⁶⁾.
Գինի տեց չինի թասով,
Համ ինձ հետ զովղ⁽⁷⁾ արաւ սիրուն:

Չովղ անելը սիրոյ բան է,
Յետոյ սէրն միաբան է.
Ոսկի մաղեր քամին տանի,
Թամամ զառ⁽⁸⁾ նշան է սիրուն:

Ջա'ն նշան թելերը թամամ⁽⁹⁾,
Բոյն է սիրուն՝ չնարի նման.
Ծոցումը կայ մի ջուխտ⁽¹⁰⁾ շամամ⁽¹¹⁾,
Ծաղկախառ բոստան է սիրուն:

1. Գեղեցկուհի: 2. Բուստ: 3. Յակիմք: 4. Ան-
յոյս, անտեղիակ: 5. Լոյս: 6. Փափագ, ցանկու-
թիւն, սէր: 7. Ուրախութիւն: 8. Ոսկեքիւ, ոս-
կեղէն: 9. Ամբողջ, լրիւ: 10. Զոյգ: 11. Փոքրիկ

Ծաղկախառ բոստան⁽¹²⁾ է թաղէն⁽¹³⁾,
Բիլլա'ն⁽¹⁴⁾, էս է խօսքին սաղէն.
Թաղի⁽¹⁵⁾ արաւ իր օթաղէն⁽¹⁶⁾,
Ղուլ⁽¹⁷⁾ անելով տարաւ սիրուն:

Ղուլ անելով խելքս տարաւ,
Գինի տեց, չթողեց ծարաւ.
Ղուլ Թաղէոս թաղի⁽¹⁸⁾ արաւ,
էս էլ մի գովբան⁽¹⁸⁾ է սիրուն:

Աշուղ Ղուլ Թաղէոսը թողել է նաեւ
կրօնական մօտիւններ, որոնք ասելի խրա-
տական-բարոյական երանգաւորում ու-
նեն:

Թէ ո՞ր թւին է վախճանել աշուղը եւ
ո՞րտեղ է գտնուում նրա գերեզմանը, յայտ-
նի չէ: Սակայն, մի հանդամանք պարզ է,
որ նա հաւատարիմ մնալով իր աշուղական
վեհ կոչմանը, միշտ ապրել է ժողովրդի
մէջ եւ իր երգերով ու իր սաղի նւագածու-
թեամբ նպաստել է գեղջուկ ժողովրդի եւ
հայ աշուղական արւեստի զարգացմանը:

Նրա մի այլ լաւագոյն ծառայութիւնը
կայանում է նրանում, որ ժողովրդի մէջ
վառ է պահել աշուղութեան սէրը, տա-
րածելով գուսանական երգն ու մեղեդին:
Այդ հանգամանքների չնորհիւ էլ նա այս-
օր հայ աշուղական գրականութեան պատ-
մութեան մէջ ունի իր ուրոյն էջը:

Գ.

ԱՇՈՒՂ ՆԷՇՏԱՐ

ԺԹ. դարի հայ աշուղական արւեստի
պատմութեան մէջ արձանագրենք նաեւ
մինչեւ օրս էլ հայ բանասիրական գրա-
կանութեան անծանօթ մնացած աշուղ Նէշ-
տարի անունը, որի կեանքի եւ աշուղական
գործունէութեան առաջին շրջանի էջերը
ձեռք տանում են Դարալագեաղի հայաբը-
նակ ու թրքաբնակ գիւղերը, որտեղ

հոտաւէտ եւ քաղք սեխ: 12. Բանջարանց:
13. Զիւղ, ոտ, հարս ու փեսայի կանգնելու տե-
ղը: 14. Էն, Աստուած: 15. Հրաւեր: 16. Սեմեակ:
17. Ծառայ, ստրուկ: 18. Վայելչութիւն, հա-
նոյք:

նակ մի հին գիւղը: Դա Փաշալուն է, որի
բնակիչներն իրանից գաղթած հայ գիւղա-
ցիներէ բեկորներ են, որոնք պարապում
են գլխաւորապէս հողագործութեամբ,
անասնապահութեամբ եւ մեղապահու-
թեամբ:

Գիւղը գրաւիչ է իր բանաստեղծական
գեղեցիկ տեսարանով, որի տպաւորու-
թիւնը խորացնում են մրգաբեր այգիները:

Փաշալուն հպարտ է նաեւ իր «Ս. Վառ-
վառ» մատուռով, որին առանձին փայլ
են տալիս երկու գեղեցկաքանդակ հայկա-
կան խաչքարերը. դրանցից մէկի վրայ
կարդում ենք. «Տէր Աստուած, ողորմեա՛
Ասլանին, էլիկո բէգին, Թորոսին՝ ի
Գրիստոս փոխեցան երիտասարդ, թվ.
202 (746+551=1297). գրիչս»: Հայ
քանդակագործական արւեստին մի թան-
կագին նմոյշ է դա, որին գիւղացիները
պահում են առանձին գուրգուրանքով:

Ահա այս գիւղի ժողովրդի պարծանքն
է աշուղ Նէշտարը, բուն անունով Մանա-
սէր Աւետիսեանը, որի մասին կենսագրա-
կան տեղեկութիւններ քիչ ունենք: Ծնւել
է նա մօտաւորապէս 1843 թւին Փաշալու-
ում: Իր նախնական կրթութիւնն ստացել
է գիւղի դպրոցում, իսկ աշուղական ար-
ւեստը սովորել է Փաշալուի հպարտութիւ-
նը կազմող նշանաւոր աշուղ Ֆաբայ
Թումասի (Թումաս Ֆարմանեանի) մօտ:

Իր բարձր եւ սուր ձայնի համար գիւ-
ղացիները տւել են նրան Նէշտար մական-
ունը:

Նրա աշուղական գործունէութեան
պատմութեան էջերը ձեռք տանում են իր
ժամանակի Դարալագեաղի եւ Նախիջևա-
նի հայաբնակ եւ թրքաբնակ գիւղերը: Իր
սաղն առած՝ նա Փաշալուից անցել է
Մարտիրոս, Սէս, Կորադիլ, Աղխաչ, Ալ-
մալու, Օղրին հայաբնակ գիւղերը: Շրջել
է նաեւ Գեօմուր, Գեաբուր, Զուղ, Մա-
րաթիւղ, Դամրչլար, Զրախու, Թարփ,
Թերփ, Քեօչպեաղ, Լէյլիկաջան, Գիւ-
միւլխանայ թրքաբնակ գիւղերը, որտեղ
իր սաղի վարպետ նւագածութեամբ եւ իր

յօրինած պարզ, բայց գեղեցիկ երգերով առանձին փայլ ու երանգ է տւել գեղջկական հանդէսներին, խնջոյքներին եւ հարսանիքներին: Այդ գծով էլ գիւղերում տարածել է գուսանական երգերը եւ ժողովրդի մէջ վառ պահել աշուղական բանաստեղծութեան ու երաժշտութեան սէրը:

Երգիչը յօրինել է աշուղական գրականութեան աւանդ է թողել հայերէն եւ թրքերէն լեզուներով մի շարք երգեր: Այդ հանգամանքն է հաստատում 1870 թւականին Դարալագեազի Քարաղլուխ գիւղում գրած ձեռագիր «Դավթարը», ուր ընդօրինակւած են աշուղի մի քանի ոտանաւորները: Այդ տաղերից մէկի տակ կարդում ենք. «Աշուղ Նէշտար է երեւելի երգիչ. ունի բազում ոտանաւորք. սաղի քաղցր նւագով եւ բարձր ու սուր ձայնով եղել է զարգը գեղջկական մաջլիսներին»: Թէ ո՞ր եւ ո՞ր տան դարակում է գտնուում աշուղի երգերի «Դավթարը», յայտնի չէ:

Նրա ստեղծագործութիւններից 1870 թւականին գրած ձեռագիր մատենանում ընդօրինակւած են երկու ոտանաւոր — «Նստել ես մաջլիսը» եւ «Մեղաւոր եմ»: Դրանցից առաջինը «Թաջնիս» է, իսկ երկրորդը՝ «մուխամազ», որոնք իրենց կառուցւածքով ձեզ ցայտուն դադափար են տալիս աշուղ Նէշտարի բանաստեղծական ձիրքի, նրա աշուղական արւեստի եւ լեզւական մշակոյթի մասին:

«Թաջնիսը» մի պարզ, բայց արեւելեան պատկերաւոր համեմատութիւններով ու վառ երանգաւորումներով վրձնւած մի սիրերգ է, ուր աշուղը գծել է իր նաղելու գեղեցիկ պատկերը եւ երգել է իր քնարական ապրումները, խոհերն ու յօյգերը: Ահա այդ երգի ամբողջական պատկերը. «Նստել ես մաջլիսը»⁽¹⁾, աչքս ընկաւ քեզ, Առեւ ես ձեռումդ ոսկի թո, այբ, սէ

Արեւակ նման ես, մրվաթ⁽²⁾ արա՛ մեզ, Փայլում է երեսիդ արեւ լիւն, այբ, սէ

[(Լատոյս):

Դու ես նաղելի, սիրուն ես գեղանի, Անթառամ ծաղիկ ես, այնպէս զովելի. Տու⁽³⁾ ջանս⁽⁴⁾ դցել ես կրակ՝ կու իրի, Թող մնայ սրտումս՝ անուշ քէ, այբ, սէ

[(Լատոյս):

Աշուղ Նէշտար ասաց. «Տու մէ բլբլու ես, Բաղերումը»⁽⁵⁾ բացւած ինչպէս մի գիւղ⁽⁶⁾

[Ես.

Խելքս դլխէս տարար՝ տու աննման ես, Խաքել ես բաղանիդ⁽⁷⁾ սիրուն դա, այբ, սէ

[(Լատոյս):

Քնարական մօտիւլի հետ աշուղն իր սաղի լարերի վրայ հնչեցրել է նաեւ կրօնական երգեր: Դրանցից նշենք «Մեղաւոր եմ» խորագրով անպաճոյճ ոտանաւորը: Դա մի «մուխամազ» է, որով երգիչն արտայայտել է իր կրօնական դժացումներն ու ապրումները: Ահա այդ տաղի նկարը.

«Մեղաւոր եմ անչափելի, Յիսուսի մայր Աստուածածին.

Գիշեր-ցերեկ լալ, ողբալով Տուր թողութիւն, Աստուածածին՝

Տէրս եկաւ մեզ խնդալով, Երկինք ու գետինք քնելով. Սրապիօն ծաղիկ տալով, Յիսուսի մայր Աստուածածին՝

Գարբիէլի փող փչեցին, Շատ-չատերը հաւատացին. Մեղքն, վարձքն կշռեցին, Յիսուսի մայր Աստուածածին՝

Աշուղ Նէշտարն եմ անճար, Վասն Քրիստոսին տաճար. Մեղաւորաց չկայ մէկ ճար, Յիսուսի մայր Աստուածածին՝

Թէ ո՞ր թւականին է վախճանւել աշուղը, ստոյգ տեղեկութիւն չկայ: Այսքանը

1. Խնջոյք, հանդէս: 2. Խղճմտամբ: 3. Դու: 4. Հոգի, մարմին, 5. Այգիներ: 6. Վարդ: 7. Մարմին, դրան:

միայն պարզ է, որ նա ապրել է եւ ստեղծագործել ԺԹ. դարի երկրորդ շրջանում: Իր աշուղական գործունէութեան ընթացքում նա, գուսանական արւեստի կրակը սիրին, թափառել է հայաբնակ ու թըրքաբնակ գիւղերը եւ ամէն տեղ էլ հնչեցրել է իր եւ յայտնի աշուղների երգերը: Նա ուղադրաւ աշխատանք է կատարել աշուղական երգերի տարածման եւ գեղջուկ ժողովրդի մտաւոր զարգացման խնդրում:

Առհասարակ, նա իր կոչումն է համարել — պայքարել ժամանակի տիրող խաւարի դէմ, պայքարել լոյսի համար եւ ժողովրդին համակել է աշուղական արւեստի սիրով, միաժամանակ ձգտել է ազնւացնել նրա գեղարւեստական ճաշակը: Այդ ազնիւ աշխատանքների շնորհիւ էլ նա հայ վաստակաւոր աշուղների շարքում պատւաւոր տեղ է գրաւում:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ

ԿԵՆԴԱՆԱԳԻՐ ԽՃԱՆԿԱՐԸ Ս. ՍՈՓԻԱՅԻ ՄԷՋ

«Բազմավեպ» քանիցս զբաղեցաւ⁽¹⁾ Ս. Գրիգոր Լուսաւորիչը ներկայացնող խճանկարով մը՝ իբր թէ Ս. Սոփիայի մէջ երեւան հանուած ըլլայ, ասկից տարիներ առաջ, ամերիկացի հնախոյզներու կողմէ:

«Բազմավեպ» նոյնիսկ հրատարակեց իր 1941ի թիւին մէջ այդ խճանկարին լուսանկարը, զոր Միացեալ Նահանգներէն՝ Հ. Վ. Հացունիին ղրկեւ էր Պր. Յր. Եաղուպեան:

Այս նկարը, Փարիզ հրատարակուող «Անահիտ» ամսաթերթին ալ հրատարակած էր մասնաւոր յօդուածով մը⁽²⁾:

Այս խճանկարին լուսանկարը պատճառ եղաւ նոյնիսկ բանավէճի մը, խճանկարին ո՛ր դարու գործ ըլլալը հաստատուելու հա-

մար: Ոմանք դայն կը ներկայացնէին որպէս 2. դարու գործ մը, այսինքն, Բիւզանդիոնի կայսեր՝ Յուստինիանոսի ժամանակակից եւ Ս. Սոփիային սոյն կայսեր կողմէ վերաշինութեան ատեն հոն գետեղուած, ի պատիւ հայ սուրբին, եւ ապա ուրեմն հայ աղբին: Ս. Սոփիան, որ արդէն ունէր «Հայոց Դուռ» մը՝ մայր դրան կողքին, կ'ունենար ուրեմն, խճանկար մըն ալ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին ձօնուած: Շիտակը՝ Հայոց եղած պատիւը մեծ էր. եւ ոմանց ոտքը գետնէն կտրել կու տար, աղբային հպարտութեան զգացումով մը:

Ուրիշներ, լրջօրէն խնդրին լծուած, կը պնդէին թէ այդ խճանկարը Ժ. դարու գործ պէտք էր նկատել, սուրբին տարազէն դատելով: Այս փաստարկութիւնը պատճառ կ'ըլլար կրօնական տարադներու խրթին խնդրը բացատրելու իր մանրամասնութիւններուն մէջ, բազմաթիւ բաղդատական օրինակներով: Նոյնիսկ օտար մասնագէտներու կարծիքներն ալ տարազի խնդրոյն մասին, երթալ հարցնելով:

Այս բանավէճին մէջ, վերջին անգամ ես էի որ կը գրէի⁽³⁾ թէ տարազի անվեր-

(1) Բազմավեպ, 1941, թիւ 1-12, էջ 13-16:

— 1943, թիւ 1-6, էջ 35-40:

— 1955, թ. 4-5, էջ 86-92, թ. 6-7, էջ 147-152:

— 1955, թ. 8-10, էջ 191-194:

(2) Անահիտ, Դ. տարի, թ. 1-2 (1932 Յուլիս-Հոկտ.), էջ 174-175:

(3) Բազմավեպ, 1955, թ. 8-10, էջ 191-194: